

ՀԱՂԱՌԴՈՒԹՅՈՒՆ

ՆԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ

բանասիրական գիրք. թեկնածու

«ԲՈՒՐՎԱԾ» ԾԻՍԱԿԱՆ ԱՆՕԹԻ ԲԱՐԲԱՆԱՅԻՆ
ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ծիսակապարտությունը քրիստոնեական հնագույն եկեղեցիների անքակտելի մասն է: Նոգևոր իշխանության սահմանած ժամերին ձեռնադրուած պաշտօնեան եկեղեցում կապարտում է աստուածպաշտութեան ծէս, որին մասնակցում են հաւաքացեալներ:

Ծիսական պարագաների, Սուրբ Պապարագի եւ այլ խորհրդակապարտութիւնների ժամանակ օգտագործուող սրբազան անօթների, եկեղեցական սպասմիւ գգեսորների անուանումները մընում են հայերէնի կրօնակեղեցական բառաշերտի մէջ: Քանի որ ծէսը մեր Եկեղեցի մուրք է գործել Յոյն Եկեղեցու միջոցով, այդ իսկ պարճառով ծիսական բառերի մեծ մասը յունական փոխառութիւններ են: Ծէս կամ ծէսի պարագայք անուանող բառերից են՝ *սղարքոյուն, բազպան, բուրվառ, եմիփոքուն, զմոռու, խունկ, կապայ, կոնդակ, կոնքեռ, դենջակ, մեռուն, նարօյ, սաղաւարտ, վեղար, ուրար, փիլուն* եւ այլն: Նշուած բառերից ոչ բոլորն են կենսունակ ժամանակակից գրական հայերէնում:

Ծիսական-արարողական անօթների մէջ առաւել լայն գործածութեամբ եւ անհրաժեշտութեամբ առանձնանում է բուրվառը: Այն գմբէթաձեւ, խաչագլուի կափարիչով խնկանոց է, որն օգտագործում է սուրբ պապարագի եւ այլ ծիսակապարտութիւնների ժամանակ՝ խնկարկելու եւ բոյր սփռելու համար: Այդ արարողակարգի նպատակը եկեղեցին եւ ժողովրդին Աստծու օրհնութեանն արժանացնելն է, եւ իւրաքանչիւր աղօթք բուրվառից փարածուող խնկան ծխի նման բարձրանում է դէպի Աստուած. «Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո, Տէր», - ասում է Դաւիթ մարգարէն:

«Բուրվառ անող բուն պաշտօնեան սարկաւագն է, որին եպիսկոպոսը ձեռնադրութեան ժամանակ հանդիսապէս յանձնում է բուրվառը ու խնկարկել է փալիս, սակայն արարողութեան մէջ հանդիսադիրն էլ, ժամարարն էլ, կարգավարն էլ են գլխաւորապէս թափօրների առթիւ բուրվառով խնկարկութիւններ անում», - մեկնաբանում է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը¹:

Բուրվառով խնկարկությունը կապարտում է աստուածպաշտութեան հետեւեալ պահերին՝ «Տէր գի բազում» ասելիս, Անտարան կարդալիս, «Օրհնութիւն» շարականի սկզբին եւ «Նոգեգալստեան» շարականին, «Փառք ի բարձունս» եւ «Ս. Աստուած» երգելիս, Պապարագի ընթացքում՝ սպասը դնելիս, վերաբերման եւ գլխաւոր երգերի ու աղօթքների,

¹ Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Ծիսական բառարան, Երեւան, էջ 61:

անդասարանի, Կրեառնագրության ժամանակ եւ «Կեցո» Կալիս: Խնարկություն եւ կարարում նաեւ եկեղեցուց դուրս Կրեղի ունեցող հոգեւոր արարողությունների ժամանակ, ինչպիսիք են հիմնարկէքը, հոգեհանգստեան, թաղման եւ այլ ծիսակարգերը:

Նախկինում խոսնկ ծիսելու համար գործածուել է *խնկանոց* կոչուող մի անօթ, որն ունէր անշոթայ փոքրիկ կրակարանի ձեւ՝ ծածկուած ծակոփէն կափարիչով: Կրակարանն ունէր պարուանդան, որ Գրիգոր Տաթեւացին կոչում է *կառոյց*:

Ըստ Յովհան Մայրավանեցու՝ բուրվառը Աստուածածնի խորհրդանիշն է: Ինչպէս Աստուածածինն է լի Սուրբ Նոգով եւ Բարձրեալի գօրծեսամբ, այնպէս էլ բուրվառը լի է սրբութեան բոյրով:

Նշուած գործառնությունով են պայմանաւորուած բուրվառի ժողովրդական ընկալումները եւ հայերէնի փարածքային փարբերակներին առանձնայարուկ անուանումները:

Ըստ Նոր հայկագեան բառարանի՝ «բուրվառ» յունարէն բառ է եւ բառացի նշանակում է «կրակարան, վառարան»²:

Նր. Աճառեանը «Արմարական բառարանում» այլ դիփարկումներ է ներկայացնում «բուրվառ» ձեւափմաստային միաւորի բաղադրիչ համարելով *բոյր* իրանեան փոխառությունը, որը հին մասնագրութեամբ աւանդուած չէ եւ գործածական է միայն նոր գրականում: Այս *բոյր* գլխաբառի փակ ներկայացնում է *բուրվառ* բառի բացարարությունը՝ «խոսնկ ծիսելու աման»³: «Բոյր» բաղադրիչը Նր. Աճառեանը կապում է նաեւ օտերէն *bud* «խոսնկ» բառի հետ⁴: Տարբեր լեզուներում այս բաղադրիչը փարբեր իմաստներ է արփայայտում՝ սանկրիփ՝ «արթուն լինել, նկափել», նաեւ՝ «արթնանալ, ուսուցանել, հաղորդել», «զգայուն», «մափուցել», «խմացականություն», «ճանաչող», զենդերէն՝ «ուշադիր լինելով», «ճանաչել փալ», «արթնանալով», «ուշադիր հսկելով», «մաւառը ըմբռնողություն», յունարէն՝ «փեղեկանալ, իմանալ», «լրաեա», «լուր, փեղեկություն», հին սլաւոներէն՝ «դիփել», «հսկել», «արթնացնել», «արթուն, աշխոյժ, սթափ», ռուսերէն՝ «պահել, պահպանել, զգուշանալ», նաեւ՝ «դիփել, զննել», «արթնացնել», հին պրոսերէն՝ «յարուցանել», անգլերէն՝ «հրամայել, մաղթել», հին իռլանդերէն՝ «շնորհակալություն», «ազգարարություն» եւ այլն⁵:

Ըստ Ն. Մառի՝ հայերէն *բոյր* բառի *բոյր* յոգնակի ձեւից են վրացերէն *բուրբու*, *բուրբուկա* բառաձեւերը՝ «ծուխ արձակել, ծխալ» բայիմաստով:

Հայերէնի փարբառներում «բուրել» բառը՝ «հուր, բոյր» իմաստով, վկայաբերուած է Մուշի փարբառի Ալաշկերտի խօսուածքում եւ Խարբերդի փարբառում⁶:

Մէլէն հակուած է «բուրվառ» կազմությունը ժողովրդական ստուգաբանութեամբ բացարբելուն եւ կարծում է, որ բառն ամբողջութեամբ իրանական փոխառություն է՝ *բուրուար* ձեւով⁷:

2 Նոր բաղադրիչ հայկագեան լեզուի, հ. 1, Երեւան, 1979, էջ 514:

3 Նր. Աճառեան, Հայերէն արմարական բառարան, հ. 1, Երեւան, 1971, էջ 470-472:

4 Նր. Աճառեան, անդ:

5 Նր. Աճառեան, անդ, էջ 471: Այս մասին փնէս նաեւ Ն. Սիմոնեանի «Արթուն» բառի ստուգաբանութեան մասին» յօդուածում. «Ջահուկեանական ընթերցումներ», Երեւան, 2011:

6 Նր. Աճառեան, անդ, էջ 471:

7 Նր. Աճառեան, անդ:

Բուրվատ բառը հայերենից ուրիշերենին է անցել *փուրվար* հնչյունական փոփոխությամբ: Կեսարիայի բարբառին բնորոշ *փուրվատ* հնչյունական զուգաբանությունը, որպես փոխառություն, թրքախոս հայերից անցել է թուրքերին և թրքախոս յոյներին:

Քանի որ ծեսը կատարում է ժողովրդի անմիջական մասնակցությամբ, ուստի ծեսին առնչուող բառերը, իրացուցելով ժողովրդի կողմից, որպես գրական փոխառություններ ներմուծում են նաև բարբառային բառապաշար՝ երբեմն պահպանելով գրական լեզուին յապուկ բառաձևեր:

Մոսկվայի Մացու, Կարսի Ղրզըլդոչ և Ճըջըլիար, Ախալքալաքի Մեծ Սամսար, Բեժանո գիղերում, Շուլաերում, Ղուկասեանի Յոդամարգում, Իջևանի Ծաղկաւանում, Եղեգնաձորի Ենգիջայում, Նախիջևանի Ազնաբերդում, Դաշքեսանի Չովդարում, Տաղբուրի Նին Թաղերում, Արաշապում, Ապարանի Արմայում, Մառնեուլի Խոժոռնիում, Աշտարակի Լեռնաբոսում և այլ փարածքներում գործածական է ժամանակակից գրական արևելահայերենին բնորոշ *բուրվատ* ձևը: Վարդենիսի Թոսկուրու, Փերիայի Շուրիշկան, Միլակերպ, Չիգեան, Սանգիբարան, Ղարդուն, Ներքին Բուրուարի Շարաւա, Քեարուանդի Վերին Քրդեր, Ալաշկերպի Ուշքիլիսա բնակավայրերում գործածական է *բուրվար* դրավոխոսած փոփոխակը:

Արևելեան և արևմտեան խմբակցության բարբառների մի սպուար խմբի բնորոշ են *բուրվատ* գրական ձևի հնչյունական փոփոխակները, որոնք կարելի է ներկայացնել չորս հիմնական խմբերով.

ա) *Բառասկզբում գրաբարի բ ձայնեղ պայթականի պահպանում՝ հնչյունական մի քանի փոփոխությունների առկայությամբ. բուրվատ* (Բուլանուխի Կոպ, Խուրի Թաղավանք, Բիթլիսի Քըխսամ, Էրզրումի Քոշկ, Կաղզուան), *բուրվար* (Մասունի Նոսներ, Օրդուբադի Մեսրոպաւան), *բուրվալ* (Թիֆլիս), *բուրվալ* (Արմաշ, Արծկէի Կոճերեր, Խիգան), *բնրվատ* (ԼՂՏ Մարտակերպի Չափար), *բնրվար* (Փերիայի Վերին Խոգեան) և այլն:

Ինչպես ցույց են տալիս օրինակները, հնչյունափոխ փոփոխակներում բառասկզբի ձայնեղը պահպանում է սակավաթիվ փարածքներում: Բառամիջում առկայ է $n > n > l$ ձայնորդների հերթագայուող երկասարիճան հնչյունափոխություն, բառավերջում $n > n > l$, նաև դրանց դրավոխություն՝ ձայնատրների և բաղաձայնների այլ փոփոխությունների առկայությամբ:

բ) *Բառասկզբում գրաբարի բ ձայնեղ պայթականի շնչեղձայնեղացում. բուրվատ* (Ակն, Մուշ, Կարին, Մանագիկերպի Բաղնոս, Արաբկիր, Խիգանի Խարիդ, Ալաշկերպի Կազի, Աշտարակի Մուղնի, Սպիտակի Շիրակամուր), *բ'ուրվատ* (Մուշի Նազիկ, Ալաշկերպ, Խուր, Բուլանուխի Միքբար և Ուրնչոր, Սեբաստիա, Կարսի Քիւրագղարա, Ապարանի Չորագլուխ և Վարդենիս), *բ'ուրվար* (Խոպրջուր, Վերին Բասենի Ալիճագրակ, Վերին Բուրուարի Ղարաք'արիս և Դէյնով, Գափլայի Գիւրջի), *բ'ուրվար* (Կարսի Ուզունքիլիսա, Մուրմալու), *բնրվատ* (Ալանբէգ), *բ'ուրվալ* (Աշտարակի Շամիրամ), *բ'ուրվալ* (Վերին Բուլանուխի Փիրան), *բ'ուրվան* (Մակու), *բ'ուրվար* (Բասենի Արմարու), *բ'ուրվատ* (Մուշի Մկրագոմ, Բուլանուխի Եռնջալու, Շերուանշիկ և Իրիցու գեղ, Բոզդանովկայի Փոզա, Կարսի Չոլախլու, Նասանդալէի Խոսրովաւան և Իշխու), *բ'ուրվար* (Բասենի Գոմաձոր, Խնուսի Դոման, Նախիջևանի Կարս), *բ'րվատ* (Փերիայի Ազնաուլ և Բոլորան), *բ'ընվատ*

(Ջէյթուն), *բ՛ըրվար* (Փերիայի Շուրիշկան և Միլակերպ), *բ՛էրվալ* (Ոգմ), *բ՛ուրվիւ* (Բուլանուխի Գեաբուներ) և այլն:

Մուշի բարբառին բնորոշ է *բուրվառ* հնչարարքերակը: Բառավերջի *կ* խուլ բաղաձայնը հաւանաբար առաջացել է *բոյր վառեկ* և *բոյր արկանեկ* յարադրութիւնների արտակարգ հնչիւնափոխութեան արդիւնքում. *արկանեկ* բայի *արկ* բայարմարը ձուլուել է *վառ* բայարմարին՝ աւելանալով *բոյր* գոյականին: Ինչպէս նշում է Ն. Աճառեանը, հայերէնում ունենք *խունկ արկանեկ* յարադրութիւնը, որը, կարծում ենք, համարանութեան օրէնքով կարող էր պարզապէս դառնալ նման կազմութեան առաջացման:

Ինչպէս ցոյց են տալիս օրինակները, շնչեղծայնեղացումն աւելի ընդարձակ տարածքներ է ընդգրկում: Այս դէպքում եւս բառամիջում և բառավերջում տեղի են ունեցել վերը նշուած հնչիւնափոխութիւնները: Առկայ է նաեւ ձայնատրների հնչիւնափոխութիւն: Ասլանբէգում *ու*-ն քմայնացել է, չնայած յաջորդում է ձայնեղ բաղաձայնի: Աճառեանի օրէնքի համաձայն՝ նշուած տարածքում *բ*-ի խլացմանը պիտի յաջորդէր *ու*-ի քմայնացումը: Տուեալ դէպքում *բ*-ն չի խլացել, քանի որ գործ ունենք գրական փոխառութեան հետ, որում ձայնատրը չի պահպանուել:

Ջէյթունում և Պարսկահայքում *ու* ձայնատրը հնչիւնափոխուել է *բ*-ի: Մակնում, Բուլանուխում և Իիմնակնում բասենցիներով բնակեցուած Աշտարակի Շամիրամում *ա* ձայնատրը քմայնացել է:

զ) *Գրարարի բ ձայնեղ պայթականի խլացում բառասկզբում՝ ձայնատրների տարբեր հնչիւնափոխութիւնների գուգորդմամբ*. *պուրվառ* (Արաւաշար, Սասունի Արփի, Գոմք, Մըշկեղ և Կրխու, Նախիջեւանի Ուլեա, Խարբերդի Բագմաշէն, Արճակի Մանդան, Աղարագար, Խիզանի Պոռնենց), *պուրվար* (Վան, Բերկրի, Բերկրու Գործոր, Վանի Նոդարան), *պ՛նրվիւր* (Վանի Արակ և Թիմարի Դոնաշէն), *պուրվալ* (Ախալցխէի Զուլդա և Ծղալթբիլա, Վանի Գիւզակ), *պուրվար* (Խարբերդ, Ախալքալաքի Վաշխան), *պուրվիւր* (Մոսկանի Նիչ), *պ՛նրվիւր* (Վանի Լէսկ), *պուրվառ* (Սասունի Նագգօ, Ալաշկերտի Մագրա, Մոսկանի Կոռ), *պուրվա՛ռ* (Աշտարակի Ագարակ, Խոշարի Զենիս), *պ՛նրվառ* (Արճակի Մանդան), *պ՛նրվիւն* (Մուղիա, Ուրմիա, Սպարկերտի Վերին Նուրուք, Շարախի Կուերս, Յաժի Թիմարի Բօճանի և Մարմեր, Վերին Նայոց ձորի Նորմօրուք), *պ՛նրվիւն* (Շարախի Արմշար), *պուրվառ* (Արծկէի Սիփան, Վանի Նագարէն և Լիմ, Կոտայքի Ողջաբերդ), *պուրվար* (Վան, Խարբերդի Նաբուսի), *պ՛նրվիւն* (Շարախ), *պ՛նրվիւն* (Գաւաշի Նարպերպ), *պուրվոռ* (Բեսար), *պ՛նրվալ* (Շարախ), *պ՛նրվառ* (Մոկսի Կըճաւ) *պ՛նրվիւն* (Ոգմ), *պ՛նրվիւն* (Մոկսի Խալենց), *պ՛նրվալ* (Մոկս), *պ՛նրվառ* (Բոլի Նարդիֆ), *պըրվուր* (Մուղիայի Խարբերկ) և այլն:

Ինչպէս ցոյց են տալիս օրինակները, Աճառեանի օրէնքը գործել է ոչ բոլոր դէպքերում, և միշտ չէ, որ *բ* ձայնեղի խլացմանը յաջորդել է *ու* ձայնատրի քմայնացումը: Արաւաշարի խոյեցիները *բուրվառ* գրական ձեւի հետ միաժամանակ գործածում են Խոյի բարբառին բնորոշ *պուրվառ* ձայնեղ բաղաձայնի խլացումով տարբերակը: Կարելի է ենթադրել, որ տուեալ բարբառում գրական բառաձեւի կիրառութիւնը յետագայ ներամուծութիւն է, և պարզապէս բարբառախօս նոր բնակավայրի՝ մայրաքաղաքին

մօտ գրնուելն ու գրական արեւելահայերէնի անմիջական ազդեցութիւնը կրելն է:

դ) *Գրաբարի ք ձայնեղ պայթականի շնչեղիւսացում բառասկզբում. փութ- փառ* (Երզնկա, Նամշեն, Մալաթիա, Պոլիս, Կոզովիւր, Սասունի Ընգուզնակ եւ Իր- ցանք, Նախիջեւանի Մեծովի, Բուլանուխի Լիզ եւ Թեղուր, Աղբակ, Վերին Ճամբա- րակ, Աշտարակի Բիւրական, Քանաքեռ, Էջմիածնի Առաքաշէն, Թալինի Կարմրաշէն), *փութի՛ն* (Կութայքի Չորաղբիւր, Այնթափ), *փութիւս* (Երեւան, Էջմիածնի Աթարբե- կեան, Ուրմիայի Իթի-Աղաջ, Սուրմալուի Նախվերիս, Գորիսի Շինուհայր, Ախալքալա- քի Բալիս, Խոշարի Նուրթուկ), *փծ փառ* (Մարաղա), *փութիւս* (Պոլիս, Ախալցխա, Նոր Նախիջեւան, Նամշենի Ճենիկ, Բասենի Տաղվերան, Էջմիածնի Ծաղկունք, Ապա- րանի Քուչակ, Սալիւրակի Լեռնապար, Կութայքի Բալահովիւր եւ Ջրվէժ), *փութիւս* (Եղեւիս), *փութիւս* (Շապին Գարահիսար), *փութիւս* (Նամշեն, Պոլիս, Թիֆլիս, Սուրմալուի Կողբ, Նուարիկ, Շամախի, Նոկրեմբերեանի Մարգարա, Բայազետի Մու- սուն), *փութիւր* (Նաճրն), *փրոռուս* (Արցախ), *փի՛նգիւս* (Գորիսի Քարահունջ, Վե- րինշէն, Բուն), *փի՛նգիւս* (Խոյ), *փի՛նգիւս* (Գորիսի Վաղարուր, Միսիանի Տոլորս), *փութիւն* (Բէլլան), *փութիւս* (Բուրդուր, Տիգրանակերտ, Մալաթիա), *փութիւս* (Վա- նի Արարմեդ, Ասլանբէզ, Սուրմալուի Էվջիլար, Կութայքի Պարզնի, Էջմիածնի Աղաւա- րուն, Նայթաղ, Ծաղկունք եւ Շահումեան, Չարմահալի Սինագան), *փՅիւս* (Արա- շարի Բուրասարան), *փութիւս* (Կութայքի Կամարիս), *փութիւս* (Մարաշ), *փրութիւս* (Կաքաւաթերդ, Արցախի Ուրգուրուն, Ղարադաղի Խանագան, Քէյուան, Սարդու եւ Ղասմաշէն, Չարմահալի Աղբուրաղ, Էջմիածնի Վարդաշէն), *փրութիւս* (Նախիջեւանի Բիսար), *փրութիւս* (ԼՂՏ Մարտակերտի Թալիշ), *փրութիւս* (Մեղրի), *փրութիւս* (Ազու- լիս), *փրութիւս* (Մալմասար, Արարաշարի Ագարասան), *փրութիւս* (Նոր Ջուղա, Գորի- սի Խնձորեսկ, Ղարադաղի Վինան), *փրութիւս* (ԼՂՏ Մարտակերտի Նաթերք, Առա- ջաձոր, Մաղաղիս, Ջանեաթաղ, Ղազանչի, Գառնաքար, Ղարաշլաղ, Քոլարակ եւ Թրդուի, Նաղրուրի Քարագլուխ, Եղեզնաձորի Աղաւնաձոր), *փրութիւս* (ԼՂՏ Մար- քունու Եմիշճան), *փիւս* (Նախիջեւանի Ագա) եւ այլն: Որոշ բնականայրերում միա- ժամանակ կիրառում են զուգահեռ հնչիւնական տարբերակներ, օրինակ՝ Կութայքի Էլար աւանում գրանցուած են *փութիւս* եւ *փութիւս*, Գորիսում՝ *փի՛նգիւս* *փիւս* եւ *փրութիւս*, Գորիսի Կորնիձորում՝ *փի՛նգիւս* *ր* եւ *փրութիւս*, Խոյում՝ *փի՛նգիւս* եւ *փի՛նգիւս*, Կարճեւանում՝ *փրութիւս* եւ *փրութիւս*, Խոյի Կարակրզի եւ Բաղիլոյ գիւ- ղերում *փութիւս* եւ *փութիւս*, Ռոդոսթոյում *փութիւս* եւ *փութիւս* եւ այլն:

Օրինակները ցոյց են տալիս, որ շնչեղիւսացած *ք* ձայնեղին յաջորդող *ու* ձայնաւորը երբեմն կորցրել է իր կայունութիւնը եւ հնչիւնափոխուել մի դէպքում *ու՛* քմայինի, մի այլ դէպքում՝ *ը* ձայնաւորի: Այս խմբի օրինակներում եւս բառամիջում տեղի են ունեցել *ն > ր* > / ձայնորդների յաջորդական անցում եւ դրափոխութիւն: Մի շարք օրինակներում բա- ռավերջի *ն* -ի դիմաց առկայ է *ր*, սակաւ դէպքերում / ձայնորդ: Ինչպէս նկատելի է, շնչեղ- ձայնեղացման երեւոյթը տարածական մեծ ընդգրկում ունի: Եթէ արեւմտեան խմբակցու- թեան մի խումբ բարբառների համար այն օրինաչափ հնչիւնական իրողութիւն է, ապա արեւելեան խմբակցութեան Ղարաբաղի, Ազուլիսի եւ այլ բարբառների համար վերոնշեալ հնչիւնափոխութիւնը բաղաձայնական օրէնքներով չի պարճառաբանում, քանի որ այդ

բարբառախմբին բնորոշ է ձայնեղների իսկացում և ոչ թե շնչեղիսկացում, այսինքն՝ *բուրվառ* > *պուրվառ* և ոչ թե *բուրվառ* > *փուրվառ*:

Դիփարկուած հնչյունափոխական օրինաչափություններից շեղում են մի քանի օրինակներ: Այսպես՝ Բուլանուխի Կողակ բնակավայրին բնորոշ է *փուրվառ* հնչյունական փաթեթակը, չնայած խօսուածքում ձայնեղ բաղաձայնները շնչեղանում են և ոչ թե շնչեղիսկանում: Սասունի Գելիեգուգանում միաժամանակ գրանցուած են *փուրվառ* շնչեղիսկացած և գրական հայերենին բնորոշ *բուրվառ* ձևերը: Ինչպես նկատելի է, երկու օրինակում էլ արփացուած չեն Սասունի բարբառին բնորոշ փեղաշարժ-փեղափոխության բաղաձայնական անցումները, ըստ որի պիպի լինել *պուրվառ* և ոչ թե *փուրվառ*, կամ պահպանուել գրական փոխառության *բ* ձայնեղը:

Խարբերդի Սվջող գիղի խօսուածքում արձանագրուած է *փուրվառ* հնչյունական փաթեթակը, որում առկայ է բառավերջին *բ* ձայնորդի անկում: Նամապարասխան գրանցումով փեղարում *ու* ձայնաորն ընդգծուած է՝ *բ* բաղաձայնի բացակայությունը վրիպակ չդիփարկելու նպարակով:

Բոգդանովկայի Փոգա բնակավայրի խօսուածքում «բուրվառ» բառին որպես հոմանիշ արձանագրուած է *թաս* ձևախմաստային միաորը, Մալաթիայում՝ *խընգաձըխիգ* (խունկ+ա+ծուխ+իկ)՝ «խունկ ծխելու աման», Շամախիի Սաղեան բնակավայրում՝ *խունգանոց* (խունկ+անոց), Եղոկիայում՝ *փարդոր* բառերը: Կարելի է ենթադրել, որ Եղոկիայի *փարդոր* փաթեթակը ծագում է պարսկերեն *փարդա*՝ «վարագույր» բառից՝ որպես արդիւնք նմանության գուգորդությանը իմաստափոխության: Տուեալ պարագայում խունկի ծուխը նմանեցում է շղարշե վարագույրի, որը պարուրում է եկեղեցում գրնուող մարդկանձեւ սրբազան անօթներն ու պարագաները:

Նայերենի փարաձրային փաթեթակներից մի քանիսում *շուշան* բառով փոխաբերաբար անուանում է բուրվառի մաս կազմող խուփը՝ փոքրիկ կափարիչը: Տուեալ դեպքում ունենը *շուշան* ծաղկանուան իմաստափոխություն նմանության գուգորդությանը, երբ «առարկաների, երեույթների, յարկանիշների և այլնի միջեղեւած որեւէ կարգի նմանությունը առաջ է բերում փուեալ առարկայի հասկացության անուանման գորձաձրին՝ որեւէ կողմով դրա նմանությունն ունեցող առարկայի համար»⁸: Կարիւում, Նամշենում, Մոկսում, Մուշում և Վանում պահպանուել է գրական հայերենին բնորոշ *շուշան* անհնչյունափոխ փաթեթակը: Շուշան-կափարիչի բարբառային հնչյունական փաթեթակներ են հանդիպում Ձեյթունում՝ *շուշոն* // *շուշոն*, Սալմաստում՝ *շուշան*, Ագուլիսում՝ *շուշան*, նախավերջին փարաձրում *ու* ձայնաորի քմայնացմամբ, վերջին փարաձրում՝ *ու* և *ու* ձայնաորների միաժամանակեայ քմայնացմամբ:

Յաճախ աշխարհիկ պահանջմունքների համար անհրաժեշտություն է առաջանում բնակարաններում, փաթեթ հաստափոխություններում, գերեզմանոցներում և այլուր խունկ ծխելու, և նման դեպքերում բուրվառին փոխարինելու են գալիս սովորական ամաններ, որոնց միշտ չէ, որ փրում են կոնկրետ անուանումներ:

⁸ Տե՛ս Գ. Բ. Զախուկեան, Է. Բ. Աղայեան, Վ. Դ. Առաքելեան, Վ. Ա. Քոսեան, Նայոց լեզու, մաս 1-ին, Ապրակ, Երեւան, 1980, էջ 248:

Գրական հայերենում, ինչպես եւ հայերէնի բարբառներում (Քեսաբ, Արամօ, Սուղիա եւ այլն) գործածում են *բուրվառ անէլ*, *բուրվառ գցել* յարադրութիւնները՝ «խնկարկել» նշանակութեամբ: Նր. Աճառեանը նշումներին հոմանիշ է համարում *խունկ արկանել* յարադրութիւնը, որը վկայաբերում է նաեւ ՆՏԲ-ում⁹:

Ընդհանրապէս ոչ միայն գրական հայերենում, այլեւ բարբառներում «բուրվառ» բառով բաղադրուած կազմութիւնները սակաւաթիւ են: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի «Ծիսական բառարանում» վկայաբերում է նաեւ *բուրվառնոց* բառը՝ հեղինակ բացատրութեամբ՝ «Նին եկեղեցիների մէջ պահաբանի դռան մօտ՝ պարի մէջ բացուած խորշ»¹⁰, որում պահում էր բուրվառը: Յետագայում այդ խորշը դադարում է որպէս բուրվառնոց կիրառուելուց:

Արդի գրական հայերենում «բուրվառ» բառը ունի փոխաբերական իմաստ, որ նշանակում է «գովք, փառաբանութիւն»¹¹:

Մի խումբ խօսուածքներում *բուրվառ* բառը ընդհանրապէս արձանագրուած չէ, եւ կարելի է ենթադրել, որ այդ բնակավայրերում այն գործածելի չի եղել կամ աղօթավայրի ու բուրվառով կապարուող այլ ծէսերի բացակայութեան, կամ բարբառախօսների կողմից բառանուան մոռացուելու պատճառով: Նման փարածքներից են Կոտայքի Առինջը, Ասկերանի Խանաբաղը, Մարտունու Նոր Շէնը, Նաղրութը, Նոր Բայազէտի Կարմիր գիւղը, Ախալքալաքը, Արարաթը, Սյրեփանաւանի Կուրթանը, Նախիջևանի Շուռուրն ու Կաղը եւ այլն: Տուեալ դէպքում նշում փարածքների մեծ մասը սրբավայր չունի:

Կարարում ասումնասիրութիւնը հաստատում է, որ հայերէնի բարբառներին հիմնականում բնորոշ են «բուրվառ» բառի հնչիւնական փոխաբերակները, եւ որքան լայն է կրօնական բառի փարածումը բարբառներում, այնքան բազմազան են նրա հնչիւնական փոխաբերակները:

Եկեղեցական սրբազան անօթի, մեր քննութեան պարագայում՝ բուրվառի բառային արքայապետութեան պահպանումը վկայում է հայ ժողովրդի՝ քրիստոնէական աւանդոյթի հանդէպ ունեցած պահպանողականութեան եւ Եկեղեցու խորհրդակապարտութիւնների ու ծիսական առարկաների հանդէպ փածած ակնածանքի մասին:

9 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Երևան, 1979, էջ 984:

10 Տե՛ս Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Ծիսական բառարան, էջ 61:

11 Է. Բ. Աղայեան, Արդի հայերէնի բացաւրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 210: